

Տէր ՌԱՖԱՅԷԼ Արքեպս. ՄԻՆԱՍԵԱՆ

# ՀԱԻԱՏՔ ԵՒ ԱԻԵՏԱՐԱՆԱՑՈՒՄ



*Օգնեա՛ Տէր անհաւատութեան իմոյ*

ՀՈՎՈՒԱԿԱՆ ԹՈՒՂԹ

Գիւմրի  
Հայ Կաթողիկէ Առաջնորդարան  
2013



Գերաշ. Տէր ՌԱՖԱՅԷԼ Արքեպս. ՄԻՆԱՍԵԱՆ  
Տիտղոսաւոր Արք. Կապաղովկեան Կեսարիոյ Հայոց  
Առաջնորդ Հայաստանի, Վրաստանի, Ռուսաստանի եւ  
Արեւելեան Եւրոպայի Կաթողիկէ Հայոց

ՀՈՎՈՒԱԿԱՆ ԹՈՒՂԹ

Հ Ա Ի Ա Տ Ք Ե Ի

Ա Ի Ե Տ Ա Ր Ա Ն Ա Ց ՈՒ Մ

Գիւմրի  
Հայ Կաթողիկէ Առաջնորդարան  
2013



## Առաջարկ

**Յ**ոյժ սիրելի հոգեւորական դաս՝ Ծայրագոյն վարդապետներ, Վարդապետներ, Քահանաներ, Սարկաւազներ, Նուիրեալ կեանքի զաւակներ, կրօնաւորական կեանքի նուիրեալ Քոյրեր, եւ Քրիստոսապաշտ հաւատացեալներ,

Աստուածային նախախնամութեամբ եւ Աստուածամօր սիրով տոգորուած շնորհաւորում եմ ձեր 2013 թուականը, որ նուիրուած է Հաւատքին եւ Աւետարանացմանը:

Բենեդիկտոս ԺԶ. սրբազան Քահանայապետը 2013 թուականը հռչակեց Հաւատքի տարի, իսկ Աւետարանացման Տարուան նուիրուած իր 2012-ի Նոյեմբեր 15-ին արտասանած ճառով Քահանայապետը, իսուֆը ուղղելով միութենական գրասենեակի ընդհանուր հաւաքին, ասաց. «Ուրախ եմ, որ այս տարուայ ձեր ընդհանուր հաւատքը կենտրոնացրել էիք եկեղեցական միութեան իրականացուելիք կեանքի վրայ: Ինչպէս նաեւ նկատի էիք առել նոր աւետարանացման կարեւորութիւնը միութենական շարժման համար:



Անտարակոյս Զեր առաջարկը կատարեալ ներդրում կը բերի Հաւատֆին նուիրուած տարուան» (*Քահանայապետական հատ Նոյեմբ.15/2012*): Այս երկու վերոյիշեալ առիթների մասին Քահանայապետի արտասանած արտայայտութիւնները մեզ յոյժ օգտակար են եւ բարոյական պարտականութիւն են դնում մեր վրայ՝ որպէս հովիւ եւ առաջնորդ՝ վերակենդանացնելու մեր մէջ, կղե՛ր եւ հաւատացեալնե՛ր, հարագատ քրիստոնէական ինֆնութիւնը: Այս սրբազան պահը մեզ խրախուսելու եւ մեր խիղճը խթանելու առիթ է, առիթ՝ ապրելու հաւատֆի վկայութիւնը թե՛ անձնական ներքին կեանքով եւ թե՛ արտաքին ընկերային բարի օրինակով: Ապրումի այս երկու իրականութիւնները նկատում եմ նշմարիտ հաւատքը մարմնացնելու լաւագոյն միջոցները՝ Քրիստոսի հանդէպ եւ նրա սուրբ անուան անետարանացումով ստանալ երկնային հրաշալի պարգեւները:

Հովուական թուղթս թող չնկատուի որպէս գրական, հոգեւոր կամ Ս. Գրային աշխատութիւն, որը կարող է մնալ անպտուղ, իմաստագուրկ եւ դատարկ ցուցամոլութիւն, այլ իւրայատուկ մի առիթ է, մեզանից իւրաքանչիւրի համար խորասուզուելու մեր ներաշխարհի մէջ, ֆննելու, ուղղելու եւ զարգացնելու մեր հոգեւոր գիտութիւնը՝ մօտենալով Աստծուն, հաւատալով փրկչագործական պատգամին եւ օգտուելով նրա երկնային անհուն բարիքներից: Թող այս տողերը նկատուեն որպէս առիթ՝ Աստծուն յայտնելու մեր որդիական երախտագիտութիւնը, առիթ՝ արժեւորելու Հաւատֆի շնորհը Յարուցեալ Քրիստոս-

սի մէջ: Հովուական թուղթս ուղղուած է մեր բուրիին՝ կղերին եւ աշխարհական դասին, նպատակ ունենալով ընդհանրական եկեղեցու հետ միասին ընդառաջել 2013թ.-ի հրաւերին, որ մեզ կանչում է խղճի ու հոգու վերանորոգութեան եւ մեր քրիստոնէական հաւատքի ապրումին եւ վկայութեանը:

Քրիստոսի եկեղեցին, ինչպէս որ դարերի ընթացքում ընտրեալ ժողովրդին հոգեւորապէս առաջադիմելու առիթներ է տրամադրել, այնպէս էլ այսօր՝ 2013թ.-ին մեզ է տրամադրում Հաւատքին նուիրուած ժամանակ՝ վերատեսնելու մեր քրիստոնէական ապրումի իրավիճակը, ընդունելու մեր սկարութիւնները՝ դրանք սրբագրելով եւ ճշմարիտ հաւատքին վերադառնալով:

Ս. Գրքի՝ Երեմիա Մարգարէի խօսքերը կարդալով. «Նա ընտրեց իր սեփական ժողովուրդը նրանց համար Աստուած եմ լինելու, իսկ նրանք ինձ համար լինելու են ժողովուրդ քանզի ամէնքը՝ նրանց փոքրերից մինչեւ մեծերը ճանաչելու են ինձ, ասում է Տէրը» (Երեմ. 31, 31-34): Որով հարց է առաջանում. Աստուծոյ ընտրուած զաւակները լինելով հանդերձ արդեօ՞ք մենք մեզ իրապէս Աստուծոյ ընտրեալ ժողովուրդ ենք համարում: Ընդհանրական եկեղեցին այսօր մեզ այս առիթն է շնորհում՝ գիտակցելու մեր յատուկ կոչումը, ինչպէս նաեւ քաջալերում է մեզ եւ առաջնորդում, որ անդրադառնանք ու առաջնակարգ պարտականութիւն համարենք 2013թ.-ը՝ պատասխանելու էական այս հարցին: Մեր պատասխանը պէտք է դառնայ մեր հաւատքի վկայութեան ու կեանքի քարոզչութեան ուղեցոյցը:

Հետևաբար այս պարտականութիւնը նախեւառաջ ինձ վրայ եմ դնում եւ սպա կղերիս, որ յատուկ շնորհքով վայելում եմ ձեռնադրութեան եւ օծման պարգելը: Այո՛, անտարակոյս չի կարելի մոռանալ մեր կղերական յատուկ կոչումը, որով Քրիստոսը մեզ կանչեց ու յանձնեց իր հիմնած Սուրբ Եկեղեցին:

Նոյն կերպ խօսքս ուղղում եմ աշխարհական դասին, որ դարձեալ աստուածային շնորհքով վայելում է մկրտութեան Ս. Խորհրդով իւրայատուկ կոչումը: Թող այս Հովուական թղթի իմաստը նկատուի մի արմատական փայլարշաւ՝ դէպի մեր ֆրիստոնէական Սուրբ Հաւատքի ըմբռնման, ընդունելութեան եւ վկայութեան:

Հովուական այս թուղթը ձգտում է լրացնելու հոգեւոր պակասը մեր հայ հասարակութիւնից ներս, լինեն երիտասարդ, թէ ծեր, անհատ, թէ խումբ եւ նաեւ, ինչու չէ, հասարակական կազմակերպութիւններ եւ գործիչներ:

Այս գրութեամբ նաեւ ձգտում եմ մեր նախնեաց ֆրիստոնէական հաւատքը պահել ու պահպանել մեր ազգային կեանքում, որով ֆրիստոնէական վկայութիւնը հրամայական անհրաժեշտութիւն է մեր անձնական եւ հրապարակային կեանքում՝ սահման դնելու անսանձ կրօնական հոսանքներին, որոնք շրջապատում եմ մեզ եւ աղաւաղում մեր նշմարիտ հաւատքն ու կրօնը:

Հրամայական պարտականութիւն է պահել, սնուցել եւ պահպանել մեր լուսաւորչեան ֆրիստոնէական Ս. Հաւատքի վառ կանթեղը՝ մեր առօրեայ աղօթասիրութեամբ, բարի վարքով եւ եղբայրսիրութեամբ: Հրամայական պարտականութիւն է նաեւ մեր օրինա-

կելի բարոյական կեանքով մեր ֆրիստոնեայ հաւատ-  
քը ապրել եւ այն վկայել գալիք հայ սերունդների  
առջեւ, որոնք, «Ինչպէս եղջերուն է փափագում ջրի  
ակունքներին, այնպէս էլ ես եմ քեզ փափագում, ո՛վ  
Աստուած» (Գիբր Եսայի 41, 2), այնպէս էլ ես եմ  
ցանկանում, որ մեր մատաղ սերունդները գան դէպի  
քեզ, ո՛վ Աստուած՝ կեանքի աղբիւր:

Քրիստոնէական հաւատքը, որին պատկանում է Հայ  
Եկեղեցին, մեր նախահայրերի ու հայրերի արիւնով  
գնուած կրօնն է: Բենեդիկտոս ԺԶ. Քահանայապետը  
շեշտում է՝ ասելով. «Ձի կարելի համամիութենական  
ընթացք ունենալ՝ անտեսելով հաւատքի տագնապը  
համայն աշխարհում, մանաւանդ այն երկրներում,  
որոնք առաջիններից են եղել ընդունելու ֆրիստոնէա-  
կան հաւատքը, եւ որոնք ընդհանրական եկեղեցու  
համար դարերով մնացել են ծաղկուն ու կենսունակ  
ֆրիստոնէական հոգեպարար ապրումներով եկեղե-  
ցիներ» (*Քահանայապետական հռո Նոյեմբ.15/2012*):

Բենեդիկտոս ԺԶ. սրբազան Պապի վերոյիշեալ  
խօսքի մէջ տեսնում եմ եւ նկատում մեր հայ ազ-  
գը՝ որպէս ծաղկուն եւ կենսունակ ֆրիստոնէական  
հոգեպարար ապրումներով հարուստ եկեղեցիներից  
մէկը: Մեր հայ եկեղեցին անցեալում ունեցել է մեծ  
կարեւորութիւն՝ որպէս առաջին պետական ֆրիս-  
տոնեայ իշխանութիւն Հռոմէական եկեղեցուց առաջ:  
Հայ եկեղեցին ընդհանրական եկեղեցուն տուել է  
հոգեւոր մշակոյթ, մարտիրոսների վկայութիւն եւ  
սուրբ հայրերի սրբակենցաղ վարք ու սրբութիւն:  
Դարերի անողորմ յարձակումների դէմ պահել ու  
պահպանել է զարդարուած ֆրիստոնէական ընդհան-

րական Սուրբ Հաւատքի գրականութեամբ ձեռագրեր: Կարելի է, թերեւս, մէջբերել հայ մեծանուն քանաստեղծ Վահան Տէրեանի գրութիւններից մի քանի տողեր, որտեղ ասում է. «Մի՛ խառնէ՛ մեզ ձեր վայրի արջի ցեղերին, մեր երկիրը ւերուած, բայց սուրբ է եւ հին»: Այո՛, մենք, այս հողին եւ այս եկեղեցուն ենք պատկանում: Մենք Վարդանանց «Վասն Կրօնից եւ Հայրենեաց» վկայութեան զուակներն ենք: Հետեւաբար բնական երեւոյթ է, եթէ մեզանից եւ մեր եկեղեցուց խնդրուի վերադարձ մեր սուրբ հայրերի հոգեւոր արմատներին եւ հոգեւոր ապրումներին: Բնական է, եթէ մեզանից պահանջուի արժանավայել վկայութիւն այն երկնային հարուստ ժառանգութեան, որ մեր սուրբ հայրերն են ապրել, գրել եւ հիւսել մեզ համար:

Մեր դիմաց ունենք հսկայ մարտահրաւերներ՝ յաղթելու չարին, անհաւատութեանը, համաշխարհայնացման եւ զանազան այլ ախտերի, որոնք սպառնում են մեզ: Նաեւ կանչուած ենք պայքարելու կրօնի հանդէպ անտարբերութեան դէմ, եւ վերարժարժել մեր նախնեաց նշմարիտ հաւատքն ու վկայութիւնը: Մեր կեանքի լայնածաւալ հորիզոնները սպասում են կատարելագործելու մեր քրիստոնէական հաւատքը, ծաղկեցնելու մեր հայ աշխարհը վարդանանցի եւ ապրիլեան Ս. Նահատակների Քրիստոսաւանդ օրինակով ու վկայութեամբ: Մի՛ վախեցիր, փոքրիկ հօս...

Ու՞ր պիտի գտնենք այս բոլոր նշմարութիւնները, եթէ ոչ Սուրբ Գրքի էջերի մէջ:

**Եւ** Աստուած մարդուն ստեղծեց իր պատկերով (ԾՆՆդ.1, 27): Տրամաբանական է հաւատփ աղբիւրները գտնել նախելանաջ Հին Կտակարանի, ԾՆՆդոց գրքի՝ Արարչագործական պատմութեան մէջ: «Աստուած մարդուն իր կերպարանով եւ նմանութեամբ ստեղծեց», - ասում է Ս. Գիրքը: Դրախտի մէջ բնակեցրեց ու նրա հետ բարեկամական յարաբերութիւն ստեղծեց մինչեւ նրա մեղքի մէջ ընկնելը: Դրա համար կարելի է ենթադրել, որ Աստծուն Հաւատալու սկզբնակէտը այստեղ է ծնունդ առել, քանզի Ադամն ու Եւան տեսան ու ճանաչեցին Աստծուն ու հաւատացին Նրա իրականութեանը: Դրախտից արտաքսուելով նրանք իմացան, որ իրենց գործած մեղքի համար էր այդ հեռացումը: Այդ մեղքը անհնազանդութիւնն է, որ կոչուեց սկզբնական մեղք: Ուստի, իմանալով իրենց էութիւնը եւ գործած մեղքի ծանրութիւնը՝ հաւատացին Աստծոյ գերագոյն արդարութեանը: Ադամի ու Եւայի հաւատփի հետ մեծացաւ յոյսը, որով Աստուած պէտք է վերականգնէր նախնական փոխյարաբերութիւնը: Աստուած իր գերագոյն արդարութեամբ պատժեց մարդուն, սակայն

որպէս կատարեալ սիրոյ Աստուած, դարձեալ պիտի փրկէր: Դրա համար Ս. Պօղոսն ասում է. «Առանց հաւատքի հնարաւոր չէ գոհացնել Աստծուն»: Ուստի հաւատքը, ինչպէս որ գրուած է Սուրբ Գրքի Հին Կտակարանի մէջ, աստուածային յատուկ նախաձեռնութիւն է:

Հին Կտակարանի պատմութիւնը գրուել է այն նպատակով, որ Հայր Աստծոյ հետ վերականգնուի հաշտութիւնը, սակայն հաշտութեան համար անհրաժեշտ էր փրկագին, որ խոստացեալ Փրկիչը՝ Միածին Որդին պիտի վճարէր: Ուստի, Հին Կտակարանի բոլոր ֆայլերն այդ անհրաժեշտ պատրաստութիւնները լրացնելու ուղղութեամբ են ընթանում:

Մեր հովուական թղթի նպատակն է նաեւ շեշտել աստուածային նախաձեռնութիւնը եւ առատահոս շնորհները, որ Աստուած մեզ պարգեւեց նախելառաջ Հին Կտակարանի միջոցով՝ հաւատալու իր գոյութեանն ու կատարեալ հայրութեանը: Այս աստուածային անպարագրելի նախախնամութիւնը շարունակ երեւում է Հին կտակարանի մէջ՝ Ադամի դրախտից արտաքուստ եւ մեղքի մէջ ընկած վայրկեանից սկսած մինչեւ Քրիստոսի գալուստը:

Ժամանակի ընթացքում Աստուած մարդու հետ մնում է հաստատուն կապերով ամրապնդուած, եւ որպէս վառ օրինակ ունենձ Աբրահամի, Յակոբի եւ Իսահակի հաւատքի պատմութիւնները Սուրբ Գրքի մէջ: Այս օրինակներն անկիւնադարձ իրականութիւն են, որ յիշատակում են որպէս անխախտ յարաբերութիւն Աստծոյ եւ մարդու միջեւ:

Աւելի ուշ, Յիսուս Քրիստոսն անգամ իր քարոզութեան ժամանակ պիտի յիշէր հաւատքի ոյժն ու կարեւորութիւնը Հարիւրապետի զաւակի բուժման պատմութեան մէջ (Մաթ. 8, 11-12): Ուստի տեսնում ենք, թէ ինչպէս են հաւատքը նկարագրելիս եւ բացատրելիս աստուածաբանները հանդիմով մէջբերում Աքրահամի օրինակը՝ ցոյց տալու նրա կոյր հաւատքն ու անխարդախ վստահութիւնը Աստծոյ իստիքն ու խոստումներին: Աստուած Աքրահամին փորձում է եւ որպէս պատասխան ընդունում Աքրահամի լիավստահ հաւատարմութիւնը իր հետ կնքուած դաշինքին: Այսպիսով, Աստուած փոխադարձաբար վերահաստատում է իր սէրն ու օրհնութիւնը Աքրահամի ու նրա սերնդի վրայ (Ծննդ.12):

Այսօրուայ դրութեամբ աստուածաբանները, ինչպէս եւ եկեղեցին, հաւատքի վերադառնալու մտահոգութեամբ դարձեալ Աքրահամի օրինակն են մէջբերում՝ վերականգնելու հաւատքի հոգեւոր արժեքներն ու գործնական ապրումները: Եկեղեցին «Նոր Աւետարանացում» է առաջարկում, այսինքն՝ նոր միջոցների դիմել եւ նոր ֆանապարհներ գտնել՝ հաղորդելու միեւնոյն նշմարտութիւնը, Քրիստոսի նշմարտութիւնը, որը մեզ առաջնորդում է դէպի նշմարիտ հաւատքին եւ փրկութեան ուղին:

Հին Կտակարանի հանդէպ ունենք յատուկ բարոյական պարտականութիւն՝ դրա մէջ տեսնելու փրկչագործական անմիջական նախապատրաստութիւնը: Աստուած մարգարէների բերանով անդադար պատգամներ եւ նշաններ է ուղարկում իր



ընտրեալ ժողովրդին: Աստուած ընտրում է Իսրայէլի ժողովրդին որպէս իր սեփական ժողովուրդ: Նրանց հետ դաշինք է կնքում, եւ հանդարտութեամբ նրանց պատրաստում: Իր ժողովրդի պատմութեան էջերում Ինքն իրեն է յայտնում, իր ծրագրերն է պատմում եւ ժողովրդին սրբացնում իր համար: Այս բոլորը, սակայն, գալիս է ի պատրաստութիւն նոր եւ կատարեալ Ուխտին, որ պիտի իրականանար մարդացած Աստուածորդու անձի մէջ: «Օրեր պիտի գան,- ասում է Տէրը,- ուր Իսրայէլի եւ Յուդայի հետ Նոր Ուխտ պէտք է կնքեմ, պէտք է օրէնքներս դնեմ իրենց սրտերի եւ մտքերի մէջ, պէտք է արձանագրեմ, ինձ պէտք է ունենան որպէս Աստուած, ու իրենք ինձ որպէս ժողովուրդ» (Երեմիա, 31, 31-34): Իսկ Եսայիի բերանով լսում ենք հետեւեալը. «Ահա կոյսը պէտք է յղանայ ու որդի պէտք է ծնի եւ նրա անունը պէտք է լինի Էմմանուէլ...» (Եսայի 7, 14): Այս բոլոր արտայայտութիւններն ուրիշ բան չեն, եթէ ոչ Աստծոյ փրկչագործական հետեւողական ընթացքը՝ հասնելու համար մինչեւ այսօրուայ մարդուն, որ կանչուած է հաւատալու եւ հաւատով փրկուելու համար. «Բոլոր ազգերի մէջ, ով երկնչում է նրանից եւ արդարութիւն է գործում, ընդունելի է նրան» (Գործ.10, 35): Վատիկանեան Բ. Տիեզերական ժողովում Աստծոյ ժողովրդի մասին խօսելիս ասուել է. «Աստուած ուզեց սրբացնել եւ փրկել մարդկային ցեղը, բայց ոչ անհատապէս եւ առանց իրար հետ կապի, այլ նա ուզեց իրենցից ստեղծել մի ժողովուրդ, որ կընդունի նրա ճշմարտութիւ-

նը եւ կժառայի նրա սրբութեան մէջ» (*L. Gent. II popolo di Dio, Nuova Alleanza*):

Այս նախադասութեան մէջ «ընդունել եւ ծառայել», նշանակում է հաւատալ, ընդունել եւ հաւատարիմ մնալ Աստծուն, որովհետեւ չի կարելի ընդունել որեւէ նշմարտութիւն առանց հաւատալու նրա Անձի գոյութեանը, փոխադարձ յարաբերութեանն ու հաւատարմութեանը: Այս է նշմարիտ յարաբերութիւնը Աստծոյ հետ, որը հին Կտակարանում շարունակւում է Մովսէսի միջոցով եւ առաջնորդութեամբ: Աստուած Տասը Պատուիրանները տալիս է Մովսէսին, որոնցից Առաջին պատուիրանն ասում է. «Ե՛ս եմ ԲՈՏԵՐ Աստուածը, ինձանից բացի այլ աստուածներ չպիտի լինեն քեզ համար» (Ելբ. 20, 2-3): Հին Կտակարանում հաւատքը կարող ենք գտնել ոչ միայն որպէս կրաւորական հաւատք՝ այսինքն լոկ ընդունել Աստծոյ կողմից մարդուն յայտնած իրականութեան կամ պարտականութեան մէջ, այլ նաեւ այն գտնենք ներգործական հաւատքի մէջ: Այսինքն, այն, որ կայանում է աստուածային սպառնալիքների ու արտայայտուած պատիժների մէջ, երբ մարդը չհաւատաց. «Հաւատք չունեցող որդիներն ինձ վրդովեցին չաստուածներով, ինձ բարկացրին իրենց կուռքերով, ուրեմն ես էլ իրենց կանհանգստացնեմ իրաւ ազգ չեղող մարդկանցով իմ բարկութիւնից հուր է բորբոքուել. դրսից սուրբ, ներսից երկիւղը թող ոչնչացնեն նրանց» (Երկրորդ օրէնք. 32, 21-27), այսպէս է ասում Աստուած՝ բիրեղացնելու եւ հաստահիմ հաւատքի մէջ ամ-

րապնդելու իր ընտրած ժողովրդին:

Հին Կտակարանը, օրենքների եւ մարգարեների պարունակ է, որոնք պետք է պատրաստեին խոստացուած Մեսիայի՝ Քրիստոսի գալուստը, որ իր հերթին պիտի գար եւ վերանորոգէր Հայր Աստծոյ նախնական Յայտնութիւնը, քարոզել յաւիտենական արքայութիւնը, հրաւիրել եւ ամրապնդել ընտրեալ ժողովրդին իր հաւատքին մէջ, եւ նրանց հաշտեցնել Աստծոյ հետ ի գին իր սրբազնագոյն արեան մկրտութեան: Հին Կտակարանը ամբողջական եւ բացայայտ միջոցն է՝ աւետելու Միածին Որդու գալուստը:

Որպէս անմիջական նախապատրաստութիւն Քրիստոսի գալստեանը Դաւիթ մարգարէն մարգարէանում է եւ սաղմոսների առաջին գրքի մէջ Քրիստոսի գալուստը նշում է հետեւեալ բառերով. «Տէրը ասաց ինձ. «Դու իմ Որդին ես, ես այսօր ծնեցի Գեղ»» (Սղմ. 1, 7): Այս մարգարէութեամբ է յայտարարում Աստծոյ փրկչագործական ամբողջ ծրագիրը եւ ծնունդ առնում Մեսիայի գալուստը:

Ի հենուկս մարդկութեան խոստարտութեան ու անհաւատութեան՝ Հայր Աստուած, ուղարկում է իր Միածին Որդուն՝ որպէս համայն աշխարհի եւ մարդկութեան Փրկիչ: Այսպէս է մարգարէանում Դաւիթ մարգարէն իր սաղմոսերգի մէջ եւ ասում Մեսիայի մասին. «Նրանց կը հովուես երկաթեայ գաւազանով: Արդ, թագաւորներ՛ր, ո՛ւշ դարձրէ՛ք սրան, եւ իրատուեցէ՛ք ամէնքդ, ծառայեցէ՛ք Տիրոջը երկիւղով եւ ցնծացէ՛ք նրա առջեւ դողալով» (Սղմ.1, 9-12): Աւելիով է արտայայտում նոյն

մարգարէն իր ութերորդ սաղմոսի մէջ՝ ասելով հետեւեալը. «Մարդը ի՞նչ է, որ յիշում ես նրան կամ մարդու որդին, որ այցի գաս նրան» (Սղմ. 8, 5): Այս տողերի մէջ ցուցաբերում են երկու պատկերներ. առաջինը՝ Դաւիթը, որպէս մարդ է հաւատում Աստծուն եւ նրա ողորմութեանն ու աստուածային անսահման սիրուն, իսկ երկրորդը՝ աստուածային գերագոյն խոնարհութեանը, որով Աստուած խոնարհում է մինչեւ մեր մարդկային նուաստութիւնը ու մարմնանալով գալիս է այցելութեան:

Դաւիթ Մարգարէն գիտակից է մարդկային խստասրտութեանն ու անհաւատութեանը, գիտակից է նաեւ Աստծոյ շնորհփին անարժան լինելուն: Բայց եւ այնպէս, Աստուած չի լքում մարդուն, այլ որոշում է մարդանալ, ապրել նրա հետ, դարմանել նրա մեղանշական վէրքերը, ու անտակ որդու նման վերադարձնում հայրական տուն: Դրա համար մարգարէն հարցնում է «Մարդն ի՞նչ է, որ յիշում ես նրան, կամ՝ մարդու որդին, որ այցի գաս նրան» (Սղմ. 8, 5):

**Եւ Բանն մարմին եղեւ եւ բնակեաց ի մեզ:  
Քրիստոս Մարմնացաւ,  
որ մարդկային բնութիւնը սրբացնի**

**Ե**րբ ժամանակն եկաւ, Մարիամը՝ անարատ յղացեալը, ծնեց աշխարհի Փրկչին: «Եւ նա ծնեց իր Անդրանիկ որդուն, իսննաբունի մէջ փաթաթեց նրան ու դրեց մսուրի մէջ» (Ղուկ. 2, 5-7), իսկ այդ ընթացքում հարուստները վայելում էին իրենց պալատների հանոյժները, եւ թագաւորներն իրենց կուտակած հարստութիւնները:

Հովիւները դարձան նրա առաջին հաւատացողները, ինչպէս նաեւ առաջին առաքեալները՝ աշխարհին հաղորդելու նորածին Մեսիայի աւետիսը: Նոր Կտակարանի մէջ յիշատակուած հովիւների պատմութիւնը հաւատքի եւ աւետարանացումի առաջին Ռահվիրաների պատկերն է այսօրուայ ըմբռնումով:

Մսուրի մանուկը՝ էմմանուէլը, որի մասին Հին Կտակարանը խօսեց եւ մարգարէացաւ, տարիներ յետոյ իրականութիւն դարձաւ: Նորածին Փրկիչը ժամանակի մէջ պիտի հիմներ, ամրապնդէր ու հաստատէր Աստծոյ ընտրեալ նոր ժողովրդին իր հաւատքի

մէջ: Աստուածային իշխանութեամբ պիտի հոչակէր Նոր Ուխտի Կտակարանը եւ ընտրեալ ժողովրդին հաշտեցնելով Հայր Աստծոյ հետ, պիտի ապահովէր նրա յաւիտենական փրկութիւնը եւ այսպիսով Նոր Կտակարանի նոր ուխտը՝ հաւատքի միակ աղբիւրն ու միակ նշմարիտ միջոցը պիտի դառնար: Քրիստոսն անձամբ է ասում. «Մի՛ կարծէ՛ք, թէ Օրէնքը կամ մարգարէներին ջնջելու եկայ. չեկայ ջնջելու, այլ՝ լրացնելու» (Մատթ. 5, 17): Ուրեմն Քրիստոսն է ժամանակի լրումը:

Չորս Աւետարանիչները, հովիւների նման իրենց լսածի եւ տեսածի վրայ հիմնուած, հաւատարմութեամբ աշխարհին հաղորդեցին Նոր կտակարանի փրկութեան պատգամը: Առաքեալները քարոզեցին Աստծոյ Աւետարանը համայն աշխարհին: Նրանք ապրեցին եւ վկայեցին Քրիստոսի արեան գնով: Այսպէս էր Պետրոսի առաքեալների վէմի վախճանը, Պօղոսի, Թադէոսի եւ Բարթողիմէոսի, Ստեփանոսի եւ մնացած առաջին եկեղեցւոյ մարտիրոսների վկայութիւնը, որոնք յանուն հաւատքի պաշտպանութեան եւ վկայութեան տենչանքին, կնքեցին իրենց կեանքը՝ այս աշխարհի մէջ վայելելու խոստացուած երկնային յաւիտենական երջանկութիւնը:

Սա է նշմարութիւնը, որ հարկաւոր է մեր հոգիների փրկութեան համար, որովհետեւ Նոր Կտակարանի էջերից գիտենք, թէ որքա՛ն դժուար էր հրեաների՝ ընտրեալ ժողովրդի, սրտի մէջ վերահաստատել հաւատքը: Անչափ հետաքրքիր է այն հատուածը, թէ Յիսուսն ինչպիսի կատաղութիւն եւ դիմադրութիւն է գտնում հրեաներից, երբ ինքիքեն յայտարարում է

հրեաներին՝ ասելով «Ես Աստծոյ Որդին եմ» (Յովհ. 10, 36): Նրանք հայհոյանք էին համարում Յիսուսի արտայայտութիւնը, որ համարձակուում էր ինքնիրեն Աստծոյ Որդի կոչել: Բայց եւ այնպէս, այս յայտնութեան վրայ մենք այսօր մեր հաւատքի դաւանանքն ենք կատարում եւ համոզուած աղօթում «Աստուած յԱստուծոյ... Ծնունդ եւ ոչ արարած, նոյն ինքն ի բնութենէ Հօր... Որդի Աստուծոյ»: Երբ Քրիստոսն ինքնիրեն յայտարարում է Աստծու Որդին, մենք Ս. Պետրոսի նման պէտք է ասենք. «Դու ես Քրիստոսը՝ կենդանի Աստծու Որդին» (Մատթ. 16, 16), «Դու յաւիտենական կեանքի իսուփեր ունես» (Յովհ. 6, 70), Դու ես ճշմարիտ մարմնացեալ Աստուածը, խոստացուած Մեսիան, որն եկաւ եւ բնակուեց մեր մէջ, Դու ես աշխարհի Փրկիչը, որ մեզ մաքրեց սուրբ արիւնով, ազատեց սատանայի որոգայթներից եւ որդեգրութեամբ հաշտեցրեց Հայր Աստծոյ հետ: Սակայն այս ամէնը հրեաների մօտ բոլորովին տարբեր իմաստ ստացաւ: Նրանք չէին ուզում ընդունել Քրիստոսին որպէս Աստծոյ Որդի: Նրանք մերժում էին հաւատալ նրան, որովհետեւ նրա մէջ տեսնում էին իրենց նման մարդ արարածի: Ել չասենք, որ տեսնում էին մի մեղաւորի, որն իրաւունք չունէր սրբապղծելու Աստծոյ անունը:

Այն ժամանակուայ Հրեաների հոգեբանութեանը իսանգարում էր ոչ միայն Քրիստոսի այն իսուփը որ «Ես Աստծոյ Որդին եմ» (Յովհ. 10, 36), այլեւ այդ իսուփի շարունակութիւնը, որտեղ ասում է. «Եթէ իմ Հօր գործերը չեմ անում, ինձ մի՛ հաւատացէք: Իսկ եթէ անում եմ, եթէ ինձ էլ չէք հաւատում, գործերի՛ն հաւա-

տացե՛ք, որպէսզի իմանա՛ք եւ ցանա՛ցե՛ք, որ Հայրն իմ մէջ է, եւ ես՝ Հօր մէջ» (Յովհ. 11, 37-38): Այսինքն, ի հեռուկս հրեաների կամֆին, Յիսուսն իր խօսքի մէջ հաստատ է մնում՝ «եւ եւ Հայրը մէկ ենք»: Երկրորդ՝ Քրիստոսը հրեաներից պահանջում էր Հաւատք եւ վկայութիւն, ինչ որ նրանք բացարձակ մերժում էին: Մինչ այսօր մենք նոյնը չե՞նք մերժում, ինչպէս անցեալում հրեաները մերժեցին Աստուծոց մեզ տրուած շնորհքը: Նոյնիսկ Հնգամատեանից, օրէնքներից եւ մարգարէներից Մեսիայի գշմարիտ աստուածութիւնը իմանալով հանդերձ Հրեաները նրան մերժեցին: Այսօր մենք եւս, Յիսուսի ամբողջական փրկչագործական իրականութիւնը Հին եւ Նոր Կտակարաններից իմանալով հանդերձ, շարունակում ենք նրան մերժել մեր առօրեայ մեղքերով:

Հրեաները գիտէին, որ Մեսիան պիտի գայ: Օրէնքներն ու մարգարէները խօսել էին նրա գալուստի մասին, զգուշացրել եւ պատրաստել էին ընտրեալ ժողովրդին այդ պահի իրականութեանը եւ լոյսին, եւ սակայն նրանք նախընտրեցին խաւարը, շարունակեցին ընդդիմանալ, մերժել Աստուծոյ պատրաստած փրկչագործական ծրագիրը:

Յիրաւի, անհասկանալի է հրեաների ընդդիմացող հոգեբանութիւնը Մեսիայի հանդէպ, որ եկել էր իրենց փրկելու սաստանայի նենգութիւններից:

Նոյնը մենք այսօր ի՛նչ համարձակութեամբ շարունակաբար մերժում ենք մեզ ճիշտաբար տրուած աստուածային շնորհները: Անցեալում Հրեաները գիտակից էին իրենց յատուկ կոչմանը. որպէս ընտրեալ ժողովուրդ աշխատելու աստուածային փրկչագործա-



կան ծրագրի մէջ եւ մինչեւ այսօր շարունակում են այն յիշել եւ պահանջել բոլորից ընդունուել այդպէս: Այսօրուայ ֆրիստոնեաներս նոյնպէս ուզում ենք ընդունուել որպէս ֆրիստոնեայ, սակայն մեր կեանքը չի համապատասխանում սոյն կոչմանը:

Փրկիչն եկաւ եւ ինքնիրեն յայտնեց իր գործած հրաշքներով: Հրեաները լսեցին նրա ֆարոգները, վայելեցին նրա կատարած բուժումները, կերան նրա տուած հրաշագործ հացը, տեսան Ղազարոսի յարութիւնը, բայց մնացին կուրացած, կարծրացած իրենց մեղքի մէջ. «Մեղքը ո՞ւմն է, որ կոյր է ծնուել. նրա՞նն է, թե՞ հօրն ու մօրը»: (Յովհ. 9, 2): Նրանք կոյր չէին, բայց կոյր մնացին մինչեւ Քրիստոսի խաչելութիւնը, երբ Փարիսեցիներն ու դպիրները բրտօրէն գոռում էին ասելով. եթէ դու ես Աստծոյ Որդին իջիր խաչի վրայից: Այսօր մենք ենք այն ընտրեալ ժողովուրդը, որ ընդդիմանում է Քրիստոսին: Հարց տանք մենք մեզ. որքանո՞վ ենք տարբերում անցեալի ընտրեալ ժողովրդից: Մենք, որ վայելեցինք ու ամէն օր վայելում ենք Քրիստոսի հրաշքներն ու բարիքները մեր կեանքի մէջ, մենք, որ փրկուեցինք Քրիստոսի Ս. Արիւնով, չե՞նք բացականչում արդեօք անցեալի ընտրեալ ժողովրդի նման, թէ «Ի՞նչ նշան կը տաս մեզ, որ հաւատանք, որ Դու ես Աստծու Որդին»: Քրիստոսը Հաւատք եւ վկայութիւն խնդրեց եւ այսօր էլ է խնդրում: Եթէ Հաւատքը չգործադրենք, կը մնանք սնանկացած: Յակոբ առաքեալն ասում էր. «Ի՞նչ արժէ հաւատալը, եթէ այն չենք գործադրում: Սատանաներն էլ են Աստծուն հաւատում եւ սոսկում: Հաւատքն

առանց գործի մեռած է: Արքահամն իր գործով արդարացաւ»:

Արդ, Քրիստոսը մեր փրկութեան Ուխտն է, օրէն-  
քի եւ մարգարէների լրումն է: Քրիստոսին հաւատա-  
ցողները նրա ընտրեալ եւ փրկուած ժողովուրդն են:  
Նա է գլուխը, որ «մահուան մատնուեց մեր յանցանք-  
ների համար եւ յարութիւն առաւ, որ մեզ արդարաց-  
նի» (Հռոմ. 4, 25): Ինքն է մարգարէների լրումը եւ  
նրանով է սկսոււմ նոր Կտակարանը՝ հիմնուած ոչ  
օրէնքի, այլ սիրոյ եւ շնորհի վրայ: Քրիստոսն իր  
աստուածութիւնը հաստատելու համար մինչեւ վեր-  
ջին պահը փորձեց բոլորին հաւաքել եւ բացատրել  
աստուածային նշմարտութիւնը, իր աշակերտներին  
անգամ հարցրեց, թէ «Մարդիկ իմ մասին ի՞նչ են  
ասում, ո՞վ է մարդու որդին» (Մատթ. 16, 13) եւ  
աշակերտները թուեցին զանազան մարդկանց զանա-  
զան կարծիքները իր մասին, ու երբ պատասխանը  
լսեց, հարցումը նրանց ուղղելով ասաց. «Իսկ դուք  
իմ մասին ի՞նչ էք ասում, ո՞վ եմ ես» (Մատթ. 16,  
15): Այսօր այս հարցումը մեզ է ուղղոււմ. ո՞վ է  
Քրիստոսը մեզ համար՝ բարի մարգարէ՞, մարդկային  
պատմութեան հանճարեղ գիտնակա՞ն, թէ՞ զանազան  
կրօնական հոսանքների նման աշխարհ եկած վարդա-  
պետութեան մի Ռահվիրայ: Ի՞նչ էք կարծում, ով է  
Քրիստոսը մեզ համար: Կարո՞ղ ենք արդեօք Պետրոս  
առաքելի նման ասել «Դու ես Քրիստոսը՝ կենդա-  
նի Աստծու Որդին» (Մատթ. 16, 16) եւ մենք դէպի  
ն՞ում գնանք:

Յիրաւի Պետրոսի պատասխանը հաստատոււմ  
է հետեւեալ իրականութիւնը «Եւ Բանն մարմին

եղել եւ բնակեաց ի մեզ»: Քրիստոսը՝ մարմնացեալ Աստուածը, եկաւ բնակելու մեր մէջ, ապրելու եւ կրելու մեր բոլորի ցաւերն ու վշտերը, բացի մեղքից, եւ դրանք դարմանելով մեզ բարձրացնելու առ Հայր: Հակառակ մեր ոչնչութեան, որի առջեւ Դաւիթ Մարգարէն զարմանալով հարցնում է. «Մարդն ի՞նչ է, որ յիշում ես նրան, կամ՝ մարդու որդին, որ այցի գաս նրան», որովհետեւ Դաւիթ մարգարէն, դիտելով Աստծոյ մեծութիւնը եւ խոստովանելով մարդկային խեղճութիւնը, հիացումով հարցնում էր, թէ ինչպէ՞ս կարող է սա պատահել մարդու հետ:

Անտարակոյս, մենք, որ Ադամի մեղքի պատճառով դրախտից արտաքսուած արարածներ ենք, կարող ենք նոյնպէս զարմանալ եւ մեր կեանքը քննելով ասել. ո՞վ ենք մենք, որ Աստուած մեզ ուղարկէր իր Միածին Որդուն: Մեր կեանքի մէջ կատարած ո՞ր մի երախտագիտական գործի կամ բարիքի համար է, որ Աստուած ուզում էր մեզ վարձատրել: Այս հարցերի պատասխանը կարելի է համառօտել հակիրճ բառերով. մարդու հանդէպ ունեցած անհուն սէ՛րը Աստծուն մղեց ամէն զոհողութեան:

Ուստի, եկէ՛ք Պետրոս Առաքեալի նման համարակորէն գոչեմք. «Դու ես Աստծոյ Որդին», այսինքն՝ հաւատալ Քրիստոսի աստուածութեանը, որ ունենանք Քրիստոսի միտքարական պատասխանը Պետրոսին «Երանի՛ է քեզ, Սիմո՛ն, Յովնանի՛ որդի, որովհետեւ մարմինը եւ արիւնը չէ, որ յայտնեց քեզ, այլ՝ իմ Հայրը, որ երկնում է» (Մատթ. 16, 17), այսինքն՝ երանի քեզ, ո՛վ մարդ, որ երկնաւոր Հայրը քեզ յայտնեց այս ճշմարտութիւնը՝ Քրիստոսի աստուա-

ծուրթիւնը, որից յետոյ պէտք է արժանանանք Քրիստոսի հիմնած Նոր Ուխտի՝ Քրիստոսի Եկեղեցու մասը կազմելուն, որի գլուխ կանգնեցրեց Պետրոս Առաքեալին. «Եւ ես քեզ ասում եմ, որ դու վէմ ես, եւ այդ վէմի վրայ պիտի կառուցեմ իմ եկեղեցիս» (Մատթ. 16, 18): Քրիստոսի վերոյիշեալ խօսքերում կան երկնային արժէքներ՝ Աստծոյ որդիների արժանապատուութիւնն ու ազատութիւնը, որոնց սրտի մէջ բնակւում է Ս. Հոգին:

## Դու վե՛մ ես, եւ այդ վե՛մի վրայ պիտի կառուցե՛մ իմ եկեղեցին:

**Ա**նտարակոյս, Քրիստոսի հիմնած եկեղեցին այն ընտրեալ ժողովուրդն է, որ Աստուած հրաւիրեց, պատրաստեց ու փրկեց իր Միածին Որդու Ս. Արիւնով: Եկեղեցին հիմնուած է այս խօսքի վրայ. «Եւ ես քեզ ասում եմ, որ դու վե՛մ ես, եւ այդ վե՛մի վրայ պիտի կառուցե՛մ իմ եկեղեցին» (Մատթ.16, 18): Պետրոսը եւ տասնմէկ առաքեալները, ինչպէս նաեւ նրանց յաջորդները եղան ոչ միայն այս շինուածքի հիմքերը, այլեւ պարտականութիւն ունեցան շարունակելու Նոր Ուխտի անտարանացումը՝ յուշելով հաւատացեալներին հաւատքի կարեւորութիւնը, խնամելով եւ ծառայելով նրանց հոգիների փրկութեան գործին: Առաքեալների շուրջ կազմուած հասարակութիւնը, որը սկիզբ առաւ Երուսաղէմում, ապա տարածուեց ամբողջ աշխարհում, եղաւ թթիւմորը Ընդհանրական եկեղեցու:

Կորնթացիներին ուղղած առաջին թուղթի մէջ Պօղոս առաքեալն ասում է. «Գալով ինձ, ես առի Տիրոջից ինչ որ իմ հերթին աւանդեցի ձեզ»: (Կորնթ.Ա.11,

23-26): Պօղոսը, որ հալածում էր Յիսուսին հաւատացողներին, գալիս է ապացուցելու նրանց հաւատքի արժէքն ու կարեւորութիւնը իրենց փրկութեան համար, խրախուսելով նրանց հաւատալ, այնպէս, ինչպէս ինքը՝ Պօղոսը, հաւատաց Քրիստոսի խօսքին: Ճշմարիտ է, որ Եկեղեցին հիմնուեց Պետրոս առաքելի անուանումով՝ որպէս իր եղբայրների մէջ առաջին պատասխանատուն, սակայն Եկեղեցին հաստատուեց վերջին ընթրիքի պահին, երբ Յիսուսը հացը կտրեց ու բաժանեց իր աշակերտներին, ասելով. «Առէ՛ք կերէ՛ք», ապա բաժակը բարձրացրեց ու ասաց. «Այս բաժակը Նոր Ուխտն է իմ արիւնով, արէ՛ք այս իմ յիշատակի համար» (Կորնթ.Ա. 11, 25): Իսկ «Լոյս Աշխարհի» (Lumen Gentium) կոնդակի մէջ կարդում ենք. «Քրիստոսը հաստատեց այս նոր դաշինքը, այսինքն՝ Նոր Ուխտի կանչելով հրեայ եւ բոլոր ազգերի ժողովուրդներին, որ հիմնուեն ոչ մարմնեղէն միութեան մէջ, այլ հոգւով կազմեն Աստծու ժողովուրդը («Լոյս Աշխարհի», Բ 9): Ուստի, եթէ մենք հաւատանք, կը դառնանք Աստծու ժողովուրդ: Քրիստոսին հաւատացողներ «Վերածնուէ՛ք ոչ թէ ապականութեան ենթակայ սերմից, այլ՝ անապականից՝ Աստծու կենդանի եւ մշտնջենական խօսքով» (Պետ.1, 23): Ահա մի քանի տողերի մէջ համառօտուած Նոր Կտակարանի Նոր Ուխտի՝ Միաժին Որդու արիւնով հաստատուած Ուխտի բացայայտ ճշմարտութիւնը:

## Ինչո՞վ է տարբերում Նոր Ուխտը Հնից:

**Հ**ին Կտակարանի մէջ հաւատքի եւ հաւատարմութեան կանչողը Հայր Աստուածն է, որ միջամտում է մարդու կեանքի մէջ, հրահրում է, ուղղում եւ առաջնորդում իր ժողովրդին օրէնքի հիման վրայ: Ընտրեալ ժողովուրդը հետեւում է Աստծոյ ձայնին, լսում նրա հրամանները, բայց երբեմն սայթափում է ու հետ վերադառնում Աստծուց իրեն տուած օրէնքին:

Նոր Ուխտի Կտակարանը Որդին է, որ Հօր նման ընթանում է իր մեսիական ժողովրդի հետ, սովորեցնում, հրահրում է հաւատքի եւ վկայութեան, բացատրում է եւ զգուշացնում, սակայն արժանապատուութիւնն ու ազատութիւնը պայման են Աստծու որդիների համար: Աստծու Որդին Նոր Օրէնքը հետեւորդների սիրոյ օրէնքն է, որ Յովաննէսի Աւետարանի մէջ ենք գտնում: Յիսուսն ասում է իր հետեւորդներին. «Նոր պատուիրան եմ տալիս ձեզ, որ սիրէք միմեանց. ինչպէս ես ձեզ սիրեցի, դուք էլ միմեանց սիրեցէք: Եթէ դուք միմեանց սիրէք, դրանով բոլորը պիտի իմանան, որ դուք իմ

աշակերտներն է՛ք» (Յվհ.13, 34-35): Այս է նոր պահանջը. Աստծուն հաւատալ սիրոյ օրէնքի հովանու տակ: Ընտրեալ նոր ուխտի ժողովուրդը պարտական է ընդունել Քրիստոսի Նոր Պատուէրը՝ աշակերտների նման եւ երկիրաժողովուրդէամբ լսել հետեւեալը. «Գնացէ՛ք, ուրեմն աշակերտ դարձրէ՛ք բոլոր ազգերին, նրանց մկրտեցէ՛ք Հօր եւ Որդու եւ Սուրբ Հոգու անունով: Ուսուցէ՛ք նրանց պահել այն բոլորը, ինչ որ ձեզ պատուիրեցի: Եւ ահա ես ձեզ հետ եմ բոլոր օրերում՝ մինչեւ աշխարհի վախճանը (Մատթ. 28, 19-20):

Ուստի, Հին եւ Նոր Կտակարանների տարբերութիւնը պարզ է. առաջինը Օրէնքի եւ երկրորդը սիրոյ ու շնորհքի Կտակարան է: Եթէ սիրոյ եւ շնորհքի զուակներն ենք, ապա պարտական ենք վկայել մեր կեանքով, բարի օրինակով, բարեպաշտութեամբ եւ հեղութեամբ, փնտրելով այն, ինչ որ մեզ միացնում է Աստծուն՝ որպէս ընտրեալ ժողովուրդ, ու հեռանալ մարդկային բոլոր սայթափումներից, որ մեզ կարող են իրենից բաժանել: Միշտ յիշենք հետեւեալ նշմարութիւնը. «Աստծու նուիրեալները իրար են մօտեցնում հաւատացեալներին, իսկ կորստեան որդիները բաժանում են նրանց»:

## **Վասն Կրօնից եւ Հայրենեաց**

Բազում ազգեր ցանկացան ու դեռ ցանկանում են ունենալ այն իւրայատուկ տեղն ու դիրքը, որ ունի հայ եկեղեցին ընդհանրական եկեղեցու մէջ: Ամբողջ հայ եկեղեցու պատմութիւնը եզակի կոչումի մի



վկայարան է, որ ցոլացնում է մեր իսկական ֆրիստոնեայ ինֆնութիւնը՝ որպէս Աստծոյ նոր ընտրեալ ժողովուրդ՝ Հին Կտակարանի հրեայ ժողովրդի փոխարէն: Այս ինֆնութեան ամենացայտուն օրինակն են դարերի ընթացքում մեր կրած անվերջանալի հալածանքների շղթան եւ մեր անթիւ նահատակների հոյլերը, որոնք իրենց արեան գեղումով վկայեցին յաչս աշխարհի իրենց փարումը եւ հաւատարմութիւնը Քրիստոսին՝ աւետելով Նրա Սուրբ անունը համայն մարդկութեան:

Մեր Հայ եկեղեցու պատմութեան ոսկեմատեանի էջերում միայն մեր հոգեւորական հայրերի անունները չէն, ինչպէս Ս.Սահակ, Ս.Մեսրոպ, Ս.Ներսէս եւ միւս հսկաները: Զկան միայն փայլուն շրջանի հոգեւոր ապրումները, այլ կան դարերի ընթացքում յանուն Քրիստոսի դափնեպսակը շահածներ ու նահատակներ: Կան Վարդանանք, Ապրիլեան միլիոնաւոր Նահատակները, կան ախարեալներ, իոստովանողներ եւ լոռութեան մէջ վասն Քրիստոսի մարտիրոսներ:

Հայ ժողովուրդը չդադարեց բարձրաձայնել իր ֆրիստոնեական համոզումները՝ խաչը ունենալով որպէս գինանշան եւ ասելով «հագար անգամ չարչարանքն ու խաչը, քան մէկ անգամ Քրիստոսին դաւանանելը»:

Ինչպէս անցեալի առաքեալները, այնպէս էլ այսօր հայ ազգը, ի հեճուկս անհաւատութեան շրջանի ցնշումների, Աստծու Սուրբ անունը վառ պահեց իր սրտի ու հոգու մէջ: Խորապէս արմատացած ֆրիստոնեական հաւատքը փառահեղ արտայայտութիւններ-

րով եւ քաջարի ապրումներով յաղթահարեց սրին ու սպառնալիքներին: Այս հերոսների շարքում կարող ենք թուել՝ երանելի Կոմիտաս վարդապետին, Մալոյեան եպիսկոպոսին, Դանիէլ Վարուժանին, Պետրոս Դուրեանին եւ շատ ու շատ անյայտ, բայց պարզ հաւատացեալների, որոնք ոչ ամաչեցին եւ ոչ էլ վախեցան բացականչելու իրենց քրիստոնէական հաւատքը, ընդհակառակը, նրանք արիաբար երգեցին Աստծոյ փառքը, գրեցին Աստծոյ Սուրբ անունը ոչ միայն իրենց սրտերում ու հոգիներում, այլ նաեւ իրենց գրական աշխատութիւններում: Այս անձանց յաջորդները մենք ենք՝ կանչուած ապրելու եւ վկայելու մեր քրիստոնէական հաւատքը:

Եթէ անցեալում ոսկեդարեան հոգեւոր գրականութիւն ունեցող հայ ժողովրդի ժառանգները կարողացան տոկալ հեթանոսներին, ապրել եւ վկայել քրիստոնէական հաւատքը, եթէ անցեալի դժուար, սեւ ու հալածանքի օրերին հայ եկեղեցին՝ կղեր ու ժողովուրդ, կարողացան պահել իրենց ինքնութիւնն արեան գնով ու նրան վկայել, առաւել եւս այս օրերին, երբ մեր եկեղեցին վայելում է կատարեալ ազատութիւն, աւելի հեշտ պէտք է լինի մեզ ապրել մեր հաւատքը, համարձակ եւ ազատ արտայայտութեամբ վկայել եւ աւետարանել՝ հետեւելով մեր նախահայրերի օրինակին, չտարուել խարուսիկ ու աշխարհամիտ հոսանքներից, որոնք փայլուն ապակիներով փորձում են գողանալ մեր սրտի ու հոգու գոհարները:

Այսօր, մինչ մենք մեր հայրենի հողի վրայ վայելում ենք կրօնական ազատութիւնը, դժբախտաբար, նոյն այս հողի վրայ Քրիստոսի անունը շահարկող

սուտ ֆարոգիչներ են վխտում, որոնք ամեն մի-  
ջոց օգտագործում են՝ մեր հոգեւոր զաւակներին  
եւ կորստեան նանապարհի մատնելու: Հետեւաբար  
ընտրութիւնը մերն է դարձեալ, ինչպէս իմ առաջին  
հովուական նամակիս մէջ: Եկեղեցին մեզ կանչում է  
հաւատփի եւ վկայութեան: Թող որ մեր օրինակը շո-  
ղայ աշխարհի դիմաց: Կդե՛ր ու ժողովո՛ւրդ, բոլորս  
մի սիրտ եւ մէկ հոգի աշխատե՛նք Քրիստոսի փառփի  
եւ մեր հոգիների փրկութեան համար:

Վստահելով Աստու շնորհին և ողորմութեանը, Աստուածամօր անհուն սիրուն և բարեխօսութեանը, խոնարհաբար հայցում եմ Առաքելական օրհնութիւնը մեզ և համայն հայ հաւատացեալներին:

A handwritten signature in black ink, appearing to read 'Hovhannes Bedrossian', written over a horizontal line. There is a small '+' sign to the left of the signature.

Փետրուար 14/2013

